

2025-2026թթ. ՄԺԾԾ և ՀՀ 2025թ. պետական բյուջեի հայտերի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում

Մարտի 18-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում տեղի ունեցավ հանրային քննարկում մարզպետի աշխատակազմի կողմից կազմված «Գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման» 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի /ՄԺԾԾ/, ներառյալ 2025թ պետական բյուջեի հայտերի նախագծերի վերաբերյալ:

Հանրային քննարկմանը մասնակցում էին մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչներ, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների անդամներ:

Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա.Դավթյանը, ողջունելով հյուրերին, շնորհակալություն հայտնեց նրանց հանրային քննարկմանը մասնակցելու պատրաստակամության համար, ապա նշեց, որ ընթացակարգի համաձայն՝ անհրաժեշտ է ապահովել համապատասխան քննարկում, հրապարակայնություն և դիտարկել առաջարկները:

Այնուհետև Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պարտականությունները կատարող Ա. Սարգսյանը հանգամանալից ներկայացրեց 2025թ. պահպանման ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման և հաշվարկ-հիմնավորումների, ինչպես նաև 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերը:

Ծավալվեց քննարկում. մասնակիցները բյուջետային հայտերի վերաբերյալ զեկուցողին ուղղեցին մի շարք հարցերը նախատեսված ծախսերի ուղղությունների և հաշվարկների վերաբերյալ, ստացան սպառիչ պատասխաններ: Զեկուցվող թեմայի առնչությամբ գրավոր առաջարկներ և դիտողություններ չեղան:

